ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Սոչի, մարտի 23-ից 27-ը, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ռուսաստանի Դաշնություն («Ռոսատոմ» պետական կորպորացիա)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Սոչիի Սիրիուս դաշնային տարածքում «Ռոսատոմ» ՊԿ-ի կողմից կազմակերպված «Ատոմէքսպո 2024» համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Համաժողովի առանցքային թեման ձևակերպված է որպես «Մաքուր էներգետիկա-միասին կերտելով ապագան»: Համաժողովի այս հիմնական թեման զարգանում է թեմատիկ նստաշրջաններում և պանելային քննարկումներում, որտեղ բացի ատոմային թեմաներից (տարբեր տեխնոլոգիաներ և ռեակտորների տեսակներ, այդ թվում նաև մոդուլային) դիտարկվում են «վերականգնվող էներգետիկայի» (արևային, քամու) և «ջրածնային էներգետիկայի» զարգացման համաշխարհային միտումները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Աշխատանքային հանդիպման ժամանակ «ՏՎԷԼ» ԲԸ ղեկավարության և մասնագետների հետ քննարկվել են ՀԱԷԿ-ին միջուկային վառելիքի մատակարարման ոլորտում համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: «ՏՎԷԼ» ԲԸ առաջարկը, որը կապված է ՀԱԷԿ-ում ՋՋԷՌ-440 ռեակտորների համար փոփոխված միջուկային վառելիքի օգտագործման հետ, ինչպես նաև միջուկային վառելիքի մատակարարման երկարաժամկետ պայմանագիր կնքելու առաջարկը պահանջում են առավել մանրամասն և համակողմանի քննարկում: Այդ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը մեծապես կախված է ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետը մինչև 2036 թվականը երկարացման ծրագրի հաջող ավարտից (իրավական և տնտեսական հիմքեր):

   Ֆորումի լիագումար նիստում զեկույցներ են եղել «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի և տարբեր երկրների պատվիրակությունների ղեկավարների կողմից:
   Լսարանը տեղեկացվել է չորրորդ սերնդի ռեակտորի փորձնական արդյունաբերական շահագործման արդյունքների մասին: Այս արագ նեյտրոնային ռեակտորը (ԲՆ-800) օգտագործում են նորարարական «MOX» և «Remix» ուրան-պլուտոնիումի վառելիք երկրորդական արտադրանքներից, ինչը հեռանկարներ է բացում ատոմային էներգիայի փոխանցումները «հավերժական» վառելիքի:

«MOX» և «Remix» վառելիքի օգտագործման ռազմավարական խնդիրն է միջուկային վառելիքի ցիկլի փակումը, այսպես կոչված, երկբաղադրիչ ատոմային էներգիայի շրջանակներում, երբ ջերմային նեյտրոնների թեթև ջրային ռեակտորները շահագործվելու են արագ նեյտրոնների ռեակտորների հետ միասին:
Նման երկկողմանի էներգահամակարգի դեպքում պլուտոնիումը, որը արդյունահանվում է «ջերմային» ռեակտորների աշխատած վառելիքից, կրկին ներգրավվում է միջուկային վառելիքի ցիկլում՝ դառնալով վառելիք «արագ» ռեակտորների համար: Նման կրկնությունների քանակը երկկողմանի համակարգում անսահմանափակ է:

Կազմակերպվել է հանդիպում «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ ղեկավարության հետ, որտեղ քննարկվել են ՀԱԷԿ-ի ՇԺԵ ծրագրի համար առավել կարևոր մի շարք միջոցառումների իրականացման աշխատանքների մեկնարկի հետ կապված խնդիրները: Հանդիպմանը հրավիրված ՌԴ արտաքին տնտեսական բանկի ներկայացուցիչը հայտնել է, որ այն միջոցառումների ֆինանսավորումը, որոնց կատարումը հանձնարարվել է «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ին՝ կնքված շրջանակային պայմանագրով, հնարավոր է այդ միջոցառումների արժեքի չափով վարկի տրամադրմամբ (արտոնյալ պայմաններով): Վարկավորման պայմանների գնահատման համար հայկական կողմին կտրամադրվի համապատասխան տեղեկատվություն:

Նոր ԱԷԿ-ի կառուցման հետ կապված հարցերը քննարկվել են «Ռուսատոմ Էներջի Փրոջեքթս» ԲԸ ղեկավարության հետ հանդիպմանը: Հայկական կողմը տեղեկացրել է, որ նոր ԱԷԿ-ի նախագծի ընտրության վերաբերյալ որոշումները կընդունվեն ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից՝ ստացված առաջարկությունների համեմատական վերլուծության արդյունքում: «ՌԷՊ» ԲԸ-ի հնարավորությունների վերաբերյալ առավել տեղեկացված լինելու համար հայկական կողմին կներկայացվի նոր ԱԷԿ-ը ՌԻԹՄ-200Ն ռեակտորներով մոդուլային բլոկներով համալրելու համառոտ, նախնական տեխնիկատնտեսական առաջարկ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովում անցկացվող միջոցառումների ձևաչափը և նպատակները ենթադրում են միայն տեղեկատվական և հաղորդակցական փոխհարաբերություններ Ատոմէքսպո-2024-ի մասնակիցների և պատվիրակների միջև: Բանակցությունների ընթացքում ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունները կամրապնդվեն համապատասխան թղթակցություններով (նամակագրություններով): Բանավոր պայմանավորվածությունների արդյունավետությունը ցույց տալու համար համաժողովի փակումից առաջ տեղի է ունեցել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորի պատասխանատու սպառիչների հովացման համակարգի արդիականացման վերաբերյալ պայմանագրի ստորագրման արարողությունը, որի պայմանագրային գումարը կազմում է շուրջ 6 մլն ԱՄՆ դոլար:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել գործուղման նպատակին հասնելու տեսանկյունից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**